# Williams Uniform Complaint Procedures Form For Educational Code Section 35186 Complaint

DATE STAMP FOR OFFICE USE ONLY:

Կալիֆոռնիայի կրթության օրենսգրքի (EC) 35186 բաժինը որոշում է ում է ընթացակարգ՝ բողոքների ներկայացման համար՝ կապված հետևյալի հետ. ուսումնական նյութերի պակասություն, հաստատությունների պայմաններ, որոնք չեն պահպանվում մաքուր կամ անվտանգ եղանակով, կամ թերի են վերանորոգման առումով, ինչպես նաև ուսուցիչների թափուր աշխատատեղեր կամ սխալ նշանակումներ: Նման բողոքները կարող են ներկայացվել անանուն: Այնուամենայնիվ, եթե ցանկանում եք պատասխան ստանալ ձեր բողոքին, պետք է ստորև տրամադրեք հետևյալ կոնտակտային տվյալները:

**Պատասխանը պարտադիր է: ❑ Այո ❑ Ոչ ❑ Անանուն**

Անուն (ըստ ցանկության)՝ ____________________

Փոստային հասցե (ըստ ցանկության)՝ ____________ Քաղաք՝ ____________ Ինդեքս՝ ____________

Հեռախոս տան (ըստ ցանկության) ____________ բջջ. (ըստ ցանկության)____________ աշխ. (ըստ ցանկության)____________

Խնդրի հայտնաբերման ամսաթիվ՝ ____________ Դպրոց՝ ____________ Տնօրեն՝ ____________

Խնդրի ծագման վայր (սենյակի համար, շենք, կամ վայր)՝ ____________________

____________________

Կուրս կամ դասարան՝ ____________ Ուսուցչի անուն՝ ____________

**<u>*Բողոքի առարկա (խնդրում ենք նշել բոլոր համապատասխան տարբերակները).*</u>**

**1. Դասագրքեր և ուսումնական նյութեր**

- ❑ Աշակերտը, կամ Անգլերեն սովորողը, չունի ստանդարտներին համապատասխան դասագրքեր կամ ուսումնական նյութեր, կամ նահանգի/Շրջանի կողմից ընդունված դասագրքեր կամ այլ անհրաժեշտ ուսումնական նյութեր, որոնք պետք է օգտագործվեն դասարանում:
- ❑ Աշակերտը հնարավորություն չունի օգտվելու դասագրքերից կամ ուսումնական նյութերից տանը կամ դպրոցից դուրս: Դրա համար չի պահանջվում յուրաքանչյուր աշակերտին տրամադրել երկուական դասագիրք կամ ուսումնական նյութ:
- ❑ Դասագրքերը կամ ուսումնական նյութերը գտնվում են վատ կամ անօգտագործելի վիճակում. էջերը բացակայում են կամ անընթեռնելի են վնասի պատճառով:
- ❑ Դասագրքերի կամ ուսումնական նյութերի պակասը լրացնելու համար աշակերտին տրամադրվել են դասագրքի կամ ուսումնական նյութի միայն որևէ մասի պատճենահանված թերթերը:

**2. Շենքի պայմաններ**

- ❑ Դպրոցի պայմանները արտակարգ են կամ լուրջ սպառնալիք են ներկայացնում աշակերտների կամ անձնակազմի առողջության կամ անվտանգության համար, ներառյալ նախկինում չբացահայտված վտանգավոր նյութերի վերացումը, որոնք անմիջական սպառնալիք են ներկայացնում աշակերտների կամ անձնակազմի համար, կոտրված պատուհանները կամ արտաքին դռները/դարպասները, որոնք չեն կողպվում, ինչը վտանգ է ստեղծում, էլեկտրամատակարարման խափանումը, գազի արտահոսքը, վնասատուների կամ մակաբույծների զգալի տարածումը, կոյուղու լուրջ խցանումը, չաշխատող օդորակման համակարգերը, հրդեհային ցողիչները, ջեռուցման կամ օդափոխման համակարգերը, շինարարական վնասվածքները, որոնք ստեղծում են վտանգավոր կամ ոչ պիտանի պայմաններ այնտեղ մնալու համար, և Շրջանի կողմից սահմանված ցանկացած այլ արտակարգ իրավիճակը:
- ❑ Դպրոցի զուգարանը կանոնավոր կերպով չի սպասարկվում կամ մաքրվում, անսարք է կամ երբեմն չի ապահովվում զուգարանի թղթով, օճառով, թղթե սրբիչներով, կամ ձեռքի չորացման միջոցները անսարք վիճակում են:
- ❑ Դպրոցական ժամերին ոչ բոլոր զուգարաններն են բաց լինում, երբ աշակերտները դասարաններից դուրս են, և բավարար քանակությամբ զուգարաններ բաց չեն լինում, երբ աշակերտները դասարանների ներսում են: Սա չի վերաբերում այն դեպքերին, երբ զուգարանի ժամանակավոր փակումն անհրաժեշտ է վերանորոգման կամ աշակերտների անվտանգության համար:

**3. Ուսուցչի թափուր աշխատատեղ կամ սխալ նշանակում**

- ❑ Ուսուցչի թափուր աշխատատեղ - Կիսամյակը սկսվել է, և կա ուսուցչի թափուր աշխատատեղ: (Ուսուցչի թափուր աշխատատեղը ենթադրում է պաշտոն, որին տարվա սկզբին ոչ մի սերտիֆիկացված աշխատող չի նշանակվել՝ դասավանդելու ամբողջ տարվա ընթացքում, կամ, կիսամյակային դասընթացի դեպքում, պաշտոն, որին կիսամյակի սկզբին ոչ մի սերտիֆիկացված աշխատող չի նշանակվել՝ դասավանդելու ամբողջ կիսամյակի ընթացքում:)
- ❑ Անգլերեն սովորողներին դասավանդելու համար նշանակվել է համապատասխան որակավորում չունեցող կամ համապատասխան դասընթաց չանցած ուսուցիչը այն դասարանում, որտեղ աշակերտների 20%-ից ավելին Անգլերեն սովորողներ են:
- ❑ Ուսուցիչը նշանակվել է դասավանդելու մի առարկա, որին լիարժեք չի տիրապետում:

Խնդրում ենք մանրամասն նկարագրել ձեր բողոքի պատճառը: Անհրաժեշտության դեպքում կարող եք կցել լրացուցիչ էջեր ՝ իրավիճակն ամբողջությամբ նկարագրելու համար: ____________________

____________________

____________________

Խնդրում ենք բողոք ներկայացնել տնօրենի գրասենյակ և/կամ ուղարկել այն Լոս Անջելեսի միասնական դպրոցական շրջանի Աշակերտների քաղաքացիական իրավունքների գրասենյակ հետևյալ հասցեով՝ 333 South Beaudry Avenue, 18th Floor, Los Angeles, CA 90017: Էլ. հասցե՝ EquityCompliance@lausd.net:
Գրասենյակ՝ (213) 241-7682: Ֆաքս՝ (213) 241-3312: